ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը հայտարարում է մրցույթ՝ քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնն զբաղեցնելու մասին

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն) հայտարարում է արտաքին մրցույթ՝ Նախարարության ճանապարհային ոլորտի քաղաքականության վարչության ճանապարհային ոլորտի ծրագրերի և մշտադիտարկման բաժնի պետի (ծածկագիր՝ 22-33.10-Ղ4-5) քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնը զբաղեցնելու համար:

Արտաքին մրցույթին կարող են մասնակցել ՀՀ քաղաքացիները, որոնք բավարարում են հայտարարված թափուր պաշտոնի անձնագրի պահանջներին:

Նախարարության ճանապարհային ոլորտի քաղաքականության վարչության ճանապարհային ոլորտի ծրագրերի և մշտադիտարկման բաժնի պետի (ծածկագիր՝ 22-33.10-Ղ4-5) պաշտոնի բնութագրի, պաշտոնն զբաղեցնող քաղաքացիական ծառայողի համար սահմանված իրավունքների, պարտականությունների, պաշտոնին ներկայացվող պահանջների՝ պաշտոնի համար պահանջվող կրթության, աշխատանքային ստաժի, մասնագիտական գիտելիքների, կոմպետենցիաների, ինչպես նաև աշխատանքի կազմակերպական լիազորությունների և ղեկավարման շրջանակների մասին տեղեկատվությունը ներառված է պաշտոնի անձնագրում, որի էլեկտրոնային օրինակը կցվում է:

Մրցույթին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները փաստաթղթերը ներկայացվում են առցանց՝ https://cso.gov.am/internal-external-competitions հղումով՝ 2026 թվականի փետրվարի 19-ից մինչև 2026 թվականի փետրվարի 26-ը ներառյալ՝ մինչև վերջին աշխատանքային օրվա ժամը 24.00-ն:

<u>Անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ՝</u>

1.դիմումը (ձևը լրացվում է էլեկտրոնային եղանակով),

2. ինքնակենսագրությունը (ձևը լրացվում է էլեկտրոնային եղանակով),
3. անձնագրի, նույնականացման քարտի լուսապատճենները (եթե անձը նույնականացման քարտ չի ներկայացնում, ապա պետք է ներկայացնի հանրային ծառայությունների համարանիշ կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքի լուսապատճենը),
4. բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթղթի լուսապատճենը,
5. աշխատանքային գործունեությունը հավաստող փաստաթղթի (աշխատանքային պայմանագիր, աշխատանքի ընդունման մասին իրավական ակտ, աշխատանքային գրքույկ) լուսապատճենը,
6. արական սեռի անձինք՝ զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասի կցագրման վկայականի լուսապատճենը,

7. լուսանկար՝ 3×4 սմ չափի:

Անհրաժեշտ է ներկայացնել վերոնշյալ փաստաթղթերի լուսապատճենները արված բնօրինակից (օտարալեզու փաստաթղթերի դեպքում՝ նաև հայերեն պաշտոնական թարգմանությունների):

<u>Փաստաթղթերն առցանց ներկայացնելու ընթացակարգ.</u>

Քաղաքացիները Թեստավորմանը պետք է ներկայանան անձնագրով և/կամ նույնականացման քարտով, կամ անձը հաստատող այլ փաստաթղթով (ՀՀ ոստիկանության կողմից ժամանակավորապես տրվող անձը (ինքնությունը) հաստատող փաստաթուղթ):

Մրցույթին մասնակցելու համար դիմումներն ընդունվում են էլեկտրոնային եղանակով՝ Քաղաքացիական ծառայության գրասենյակի կայքէջի՝ https://cso.gov.am/ միջոցով: Էլեկտրոնային եղանակով դիմում ներկայացնելու համար անհրաժեշտ է այցելել https://cso.gov.am/ կայքէջի «Գլխավոր» էջի «Մրցույթների հայտարարություններ» բաժնի «Ղեկավար և մասնագիտական» ենթաբաժին: Ծանոթանալով մրցույթի մասին հրապարակված հայտարարության բովանդակությանը՝ քաղաքացին կարող է հայտարարության տեքստի վերջում նշված «Դիմել» ստեղնի օգնությամբ ներկայացնել էլեկտրոնային դիմում: Սեղմելով «Դիմել» ստեղնը՝ բացվում է «Մուտք» պատուհանը, որտեղ անհրաժեշտ է լրացնել վավեր էլեկտրոնային փոստի հասցե, գաղտնաբառ և սեղմել «Գրանցվել» կոճակը, եթե առաջին անգամ է դիմում ներկայացվում վերոնշյալ կայքէջի միջոցով, իսկ եթե արդեն գրանցված է, անհրաժեշտ է սեղմել «Մուտք» կոճակը:

Հաջորդ քայլով անհրաժեշտ է բացված պատուհանի վերևի աջ անկյունում՝ «Իմ էջը» բաժնում լրացնել անձնական տվյալները և «Կրթություն», «Օտար լեզուներ», «Համակարգչային ծրագրեր» բաժինները, պարտադիր լրացման ենթակա բոլոր դաշտերը, կցել հայտարարության մեջ նշված անհրաժեշտ փաստաթղթերի լուսապատճենները, լուսանկարը և սեղմել «Պահպանել փոփոխությունները» ստեղնը:

Լրացնելով «Իմ էջի» անձնական տվյալները, կցելով անհրաժեշտ փաստաթղթերը՝ անհրաժեշտ է արդեն իսկ գրանցված օգտատիրոջ էջում՝ «Մրցույթներ» բաժնում գտնել կոնկրետ պաշտոնի համար անցկացվող մրցույթի մասին հրապարակված հայտարարությունը և «Գործողություններ» ենթաբաժնի ներքո նշված «Դիմել» ստեղնով ներկայացնել դիմումը, որից անմիջապես հետո քաղաքացին ստանում է ծանուցում դիմումն ընդունվելու մասին:

Դիմումի կարգավիճակի մասին տեղեկատվություն կարելի է ստանալ նաև օգտատիրոջ անձնական էջի «Մրցույթներ» բաժնի «Հայտարարություններ» ենթաբաժնում կոնկրետ պաշտոնի համար հայտարարված մրցույթի տողում «Գործողություններ» ենթաբաժնի ներքո գրառումից, նշված հատվածում՝

ա) եթե ակտիվ է «Դիմել» ստեղնը, ապա դիմումը դեռևս գրանցված չէ,

բ) եթե ակտիվ է «Իմ դիմումը» ստեղնը, ապա դիմումը ներկայացված է Նախարարություն, և այն ուսումնասիրման փուլում է,

գ) եթե ակտիվ է «Խմբագրել» ստեղնը, ապա անհրաժեշտ է խմբագրել դիմումը՝ շտկելով փաստաթղթերի թերություններն ու սխալները, և կրկին ներկայացնել այն:

Ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում հնարավոր է փաստաթղթերը հետ վերադարձվեն քաղաքացուն՝ խմբագրման համար: Նման դեպքում քաղաքացին պարտավոր է ծանուցումն ուղարկելուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում կրկին դիմել՝ վերացնելով փաստաթղթերի թերություններն ու ուղղելով սխալները, որոնց մասին քաղաքացին ծանուցվում է «Իմ էջի» «Ծանուցումներ» բաժնի և էլեկտրոնային փոստի միջոցով: Փաստաթղթերի թերությունների և սխալների մասին մեկնաբանությունը քաղաքացին կարող է տեսնել՝ բացելով «Իմ էջի» «Մրցույթներ» բաժնի համապատասխան հայտարարության հերթական համարից առաջ դրված ⊕ նշանը:

Փաստաթղթերը խմբագրելու համար անհրաժեշտ է այցելել «Անձնական էջ»-ի «Մրցույթներ» բաժնի «Հայտարարություններ» ենթաբաժին, ընտրել կոնկրետ պաշտոնի համար հրապարակված հայտարարությունը, «Գործողություններ» ենթաբաժնի ներքո նշված «Խմբագրել» կոճակը սեղմել, կատարել փոփոխությունները և ներքևում նշված «Դիմել» կոճակի միջոցով դիմումը կրկին ներկայացնել:

Համակարգում գրանցվելուց հետո քաղաքացին իր «Անձնական էջ» կարող է մուտք գործել՝ այցելելով https://cso.gov.am/ կայքէջի «Գլխավոր» էջի «Մուտք» բաժին կամ https://hartak.cso.gov.am/ հղումի «Անձնական էջ» բաժինը, որտեղ անհրաժեշտ է լրացնել գրանցված էլեկտրոնային փոստի հասցեն և գաղտնաբառը:

Մրցույթի թեստավորման փուլը կանցկացվի 2026 թվականի մարտի 20-ին՝ ժամը 09:30-ին, Ջրային կոմիտեի վարչական շենքում (հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Վարդանանց փող. 13ա, հարկ 5-րդ):
Մրցույթի հարցազրույցի փուլը կանցկացվի 2026 թվականի մարտի 24-ին՝ ժամը 11:00-ին, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության վարչական շենքում (հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն N 3, 6-րդ հարկ, դահլիճ):

Մրցույթի հարցազրույցի փուլը կանցկացվի «Հարցարան» ձևաչափով:

Հիմնական աշխատավարձը Հիմնական աշխատավարձը 322816 (երեք հարյուր քսաներկու հազար ութ հարյուր տասնվեց) ՀՀ դրամ է:

Նշված պաշտոնին հավակնող անձը պետք է լինի բարեկիրթ, պարտաճանաչ, հավասարակշռված, գործնական, ունենա նախաձեռնողականություն և պատասխանատվության զգացում:

<u>ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՓՈՒԼԻ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐ</u>

- ***ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ (ՔԾ ԳՐԱՍԵՆՅԱԿ)***

- «Քաղաքացիական ծառայության մասին» օրենք (Հոդվածներ՝ 5, 7, 9, 10, 12-17, 19-21, 23, 24, 29, 30, 33, 35, 37, 39)

հղումը՝ https://www.arlis.am/hy/acts/204205

- «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենք. (Հոդվածներ՝ 4-7, 20-27)

հղումը՝ https://www.arlis.am/hy/acts/207626

- «Հանրային ծառայության մասին» օրենք. (Հոդվածներ՝ 3-9, 15, 17, 20, 27.1, 28-37, 43)

հղումը՝ https://www.arlis.am/hy/acts/203925

- ՀՀ Սահմանադրություն (փոփոխություններով)՝ (Հոդվածներ՝ 1 2, 4, 6-8, 11-16, 18, 21, 23, 25-27, 33, 38, 40-48, 50, 51, 55, 64, 71, 73, 88, 89, 91, 93, 95, 96, 98, 101, 102, 103, 105, 106, 109, 110, 111, 113, 115, 116, 120, 122, 127, 131, 132, 134, 137, 140, 143, 146-155, 162, 164, 202, 205)

հղումը՝ https://www.arlis.am/hy/acts/143723

- ***ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ (Տարածքային կառավարման նախարարություն)***

- <<Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին>> ՀՀ օրենք. հոդվածներ՝ 2, 3, 7, 8, 9, 13.1, 15

հղումը՝ https://www.arlis.am/hy/acts/215311

- <<Ավտոմոբիլային ճանապարհների մասին>> ՀՀ օրենք. հոդվածներ՝ 2,3,6,8,11-15,18,19

հղումը՝ https://www.arlis.am/hy/acts/195012/latest

- <<Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին>> ՀՀ օրենք. հոդվածներ՝ 3, 4, 5, 7, 11, 12, 16, 22, 23, 25

հղումը՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=171966

- << Քաղաքաշինության մասին >> ՀՀ օրենք. հոդվածներ՝ 4,6,10,10.1,11,12,13,14.1,17,23

հղումը՝ https://www.arlis.am/hy/acts/218707/latest

- ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 4-ի «Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման մակարդակների գնահատման ու կատարված աշխատանքների ընդունման կարգը հաստատելու մասին և մակարդակների գնահատման ու կատարված աշխատանքների ընդունման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 9-ի N 1942-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1419-Ն որոշում. Ամբողջ որոշումը.

հղումը՝ https://www.arlis.am/hy/acts/157538/latest

- ՀՀ կառավարության 2006 թվականի հունվարի 19-ի «Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհներին գովազդի (գովազդային վահանակի) տեղադրման, ինչպես նաև ապօրինի տեղադրված գովազդային վահանակի ապամոնտաժման կարգը հաստատելու մասին» N 765-Ն որոշում. Ամբողջ որոշումը.

հղումը՝ https://www.arlis.am/hy/acts/156387/latest

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻ ՓՈՒԼՈՒՄ ՍՏՈՒԳՎՈՂ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ ԵՎ ԴՐԱՆՔ ԿԻՐԱՌԵԼՈՒ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենք. https://www.arlis.am/hy/acts/208569/latest
- «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենք. https://www.arlis.am/hy/acts/204205/latest
- «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենք. https://www.arlis.am/hy/acts/195012/latest
- «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենք: https://www.arlis.am/hy/acts/215311
- << Քաղաքաշինության մասին >> ՀՀ օրենք. https://www.arlis.am/hy/acts/218707/latest
- Պաշտոնի անձնագրով նախատեսված գործառույթների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կոմպետենցիաները՝ տե՛ս պաշտոնի անձնագրում:

Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները մրցույթի վերաբերյալ հարցերի և լրացուցիչ տեղեկությունների համար կարող են դիմել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության անձնակազմի կառավարման բաժին (հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն N 3, հեռախոսահամար՝ 010-511-355, 010-511-316, էլեկտրոնային փոստի հասցե՝ n.kirakosyan@mta.gov.am):

Հավելված N 5
Հաստատված է
Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների
նախարարության գլխավոր քարտուղարի
2025թ. հունիսի 23-ի N 27-Լ հրամանի

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՈԼՈՐՏԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՈԼՈՐՏԻ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ

1.Ընդհանուր դրույթներ
1.1 Պաշտոնի անվանումը, ծածկագիրը Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) ճանապարհային ոլորտի քաղաքականության վարչության (այսուհետ՝ Վարչություն) Ճանապարհային ոլորտի ծրագրերի և մշտադիտարկման բաժնի (այսուհետ՝ Բաժին) պետ (ծածկագիրը՝ 22-33.10-Ղ4-5) **1.2 Ենթակա և հաշվետու է** Բաժնի պետը անմիջական ենթակա և հաշվետու է Վարչության պետին

1.3 Ենթակա և հաշվետու պաշտոնները

Բաժնի պետին անմիջական ենթակա և հաշվետու են Բաժնի աշխատողները

1.4 **Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները**

Բաժնի պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի գլխավոր մասնագետներից մեկը:

1.5 Աշխատավայրը

Հայաստան, ք. Երևան-10, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3

2. Պաշտոնի բնութագիրը

2.1 Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

Գործառույթները՝

1. Ապահովում է ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների (բացառությամբ Երևան քաղաքի տարածքում գտնվող այդ ճանապարհների մաս հանդիսացող ճանապարհահատվածների) շինարարության ու շահագործման ընդունման աշխատանքները,
2. Ապահովում է Նախարարության տնօրինության տակ գտնվող ավտոմոբիլային ճանապարհների պաշտպանական գոտիներում և բնակավայրերի սահմանների միջով անցնող տարանցիկ հատվածներում շենքերի և շինությունների կառուցման, վերակառուցման համաձայնությունների և տեխնիկական պահանջների տրամադրման աշխատանքները,
3. Ապահովում է Նախարարության տնօրինության տակ գտնվող ավտոմոբիլային ճանապարհների պաշտպանական գոտիներում և բնակավայրերի սահմանների միջով անցնող տարանցիկ հատվածներում ինժեներաերկրաբանական, ինժեներագեոդեզիական հետազոտություններ, արդյունահանման աշխատանքներ իրականացնելու, անտառահատում կատարելու, հողածածկույթը վնասելու, պաշտպանական գոտիների հողերում հիդրոլոգիական ռեժիմի փոփոխություններ կամ ռելիեֆի տարրերի կայունություն (սողանքներ, լանջերի փլվածքներ, ձորակներ, լճակներ կամ հողերի ճահճացում) ապահովող աշխատանքներ իրականացնելու համաձայնությունների և տեխնիկական պահանջների տրամադրման աշխատանքները,
4. Ապահովում է Նախարարության տնօրինության տակ գտնվող ավտոմոբիլային ճանապարհների պաշտպանական գոտիներում և բնակավայրերի սահմանների միջով անցնող տարանցիկ հատվածներում ճանապարհային երթևեկությանը չվերաբերող նշաններ, ցուցանակներ, լուսավորություն տեղադրելու, ծառատունկ իրականացնելու համաձայնությունների և տեխնիկական պահանջների տրամադրման աշխատանքները,
5. Ապահովում է Նախարարության տնօրինության տակ գտնվող ավտոմոբիլային ճանապարհների պաշտպանական գոտիներում և բնակավայրերի սահմանների միջով անցնող տարանցիկ հատվածներում ճանապարհին միացնող ուղիներ, իջատեղեր, մուտքեր և ելքեր կառուցելու համաձայնությունների և տեխնիկական պահանջների տրամադրման աշխատանքները,
6. Ապահովում է Նախարարության տնօրինության տակ գտնվող ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտում ճանապարհի երկարությամբ հաղորդակցուղիների

տեղադրման համաձայնությունների և տեխնիկական պահանջների տրամադրման աշխատանքները,

7. Ապահովում է Նախարարության տնօրինության տակ գտնվող ավտոմոբիլային ճանապարհի օտարման շերտում և պաշտպանական գոտում սպասարկման օբյեկտների տեղադրման թույլտվությունների տրամադրման աշխատանքները,
8. Ապահովում է ՀՀ ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների զարգացմանն ուղղված ծրագրերի և դրանց ֆինանսավորման առաջնահերթությունների որոշման բազմաչափանիշային վերլուծության, տվյալ տարվան հաջորդող տարվա ՀՀ միջպետական և հանրապետական ճանապարհների զարգացման առաջնահերթությունների ցանկի կազմման աշխատանքները և ներկայացնում է հաստատման,
9. Ապահովում է ՀՀ ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների զարգացմանն ուղղված ծրագրերի և դրանց ֆինանսավորման առաջնահերթությունների որոշման բազմաչափանիշային վերլուծության, տվյալ տարվան հաջորդող տարվա ՀՀ մարզային (տեղական) նշանակության ճանապարհների զարգացման առաջնահերթությունների ցանկի կազմման աշխատանքները և ներկայացնում է հաստատման,
10. Ապահովում է պետություն-մասնավոր գործընկերության շրջանակներում ճանապարհաշինության ոլորտում ներդրումային ծրագրերի իրականացման աշխատանքները՝ «Պետություն մասնավոր գործընկերության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան,
11. Ապահովում է ոլորտի տվյալ բյուջետային տարվա ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորում պահանջող ծրագրերի վերաբերյալ (ծրագրային բյուջետավորման ձևաչափով) առաջարկությունների և դրանց կատարման ու արդյունքային ցուցանիշների ներկայացման աշխատանքները,
12. Ապահովում է ոլորտի զարգացման և քաղաքականության մշակման ու առաջարկությունների ներկայացման, ինչպես նաև իրականացվող ենթակառուցվածքային ծրագրերի իրազեկման և լուսաբանման վերաբերյալ աշխատանքները,
13. Ապահովում է օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով ճանապարհաշինական բնագավառին վերաբերող համապատասխան վարչական վիճակագրական հաշվետվությունների (հարցաթերթեր, տեղեկանքներ և այլն) ներդրման ու դրանց միջոցով հավաքագրված տվյալների հիման վրա վարչական վիճակագրական ռեգիստրի վարման աշխատանքները.
14. Ապահովում է ճանապարհային ոլորտի ծրագրերի և մշտադիտարկման գործունեությանը վերաբերվող քաղաքացիների նամակների (դիմումների և բողոքների) սահմանված կարգով քննարկումը:

<u>Իրավունքները՝</u>

- ՀՀ ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների (բացառությամբ Երևան քաղաքի տարածքում գտնվող այդ ճանապարհների մաս հանդիսացող ճանապարհահատվածների) շինարարության ու շահագործման ընդունման

աշխատանքների կազմակերպման համար ճանապարհային ոլորտի և կապալառու կազմակերպություններից պահանջել հաշվետվություններ և տեղեկանքներ,

- Պահանջել Նախարարության տնօրինության տակ գտնվող ավտոմոբիլային ճանապարհների պաշտպանական գոտիներում և բնակավայրերի սահմանների միջով անցնող տարանցիկ հատվածներում շենքերի և շինությունների կառուցման, վերակառուցման, ինժեներաերկրաբանական, ինժեներագեոդեզիական հետազննություններ, արդյունահանման աշխատանքներ իրականացնելու, անտառահատում կատարելու, հողածածկույթը վնասելու, պաշտպանական գոտիների հողերում հիդրոլոգիական ռեժիմի փոփոխություններ կամ ռելիեֆի տարրերի կայունություն (սողանքներ, լանջերի փլվածքներ, ձորակներ, լճակներ կամ հողերի ճահճացում) ապահովող աշխատանքներ իրականացնելու համար տեխնիկական պայմաններ տրամադրելու և հողերի օգտագործման վերաբերյալ համապատասխան մարմիններից, իրավաբանական անձանցից լրացուցիչ փաստաթղթեր (ճարտարապետահատակագծային առաջադրանքների, նախագծերի, տեղանքի սխեմաներ և այլն).
- Պահանջել Նախարարության տնօրինության տակ գտնվող ավտոմոբիլային ճանապարհների պաշտպանական գոտիներում և բնակավայրերի սահմանների միջով անցնող տարանցիկ հատվածներում ճանապարհային երթևեկությանը չվերաբերող նշաններ, ցուցանակներ, լուսավորություն տեղադրելու, ծառատունկ իրականացնելու, ճանապարհին միացնող ուղիներ, իջատեղեր, մուտքեր և ելքեր կառուցելու համար տեխնիկական պայմաններ տրամադրելու և հողերի օգտագործման վերաբերյալ համապատասխան մարմիններից, իրավաբանական անձանցից լրացուցիչ փաստաթղթեր (ճարտարապետահատակագծային առաջադրանքների, նախագծերի, տեղանքի սխեմաներ և այլն).
- Պահանջել Նախարարության տնօրինության տակ գտնվող ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտում պաշտպանական գոտում սպասարկման օբյեկտների տեղադրման տեխնիկական պայմաններ տրամադրելու և հողերի օգտագործման, ճանապարհի երկարությամբ հաղորդակցուղիների տեղադրման վերաբերյալ համապատասխան մարմիններից, իրավաբանական անձանցից լրացուցիչ փաստաթղթեր (ճարտարապետահատակագծային առաջադրանքների, նախագծերի, տեղանքի սխեմաներ և այլն) ,
- ՀՀ ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների զարգացմանն ուղղված ծրագրերի և դրանց ֆինանսավորման առաջնահերթությունների որոշման բազմաչափանիշային վերլուծության, տվյալ տարվան հաջորդող տարվա ճանապարհների զարգացման առաջնահերթությունների ցանկի կազմման նպատակով ՀՀ միջպետական, հանրապետական և մարզային (տեղական) նշանակության ճանապարհահատվածների վերաբերյալ ճանապարհային ոլորտի կազմակերպությունից պահանջել առաջնահերթ և հրատապ հիմնանորոգում պահանջող ճանապարհների վերաբերյալ հաշվետվություն և հիմնավորումներ.
- Պետություն-մասնավոր գործընկերության շրջանակներում ճանապարհաշինության ոլորտում ներդրումային ծրագրերի կազման նպատակով համապատասխան

մարմիններից, ՀՀ մարզպետների աշխատակազմերից, համայնքապետարաններից և իրավաբանական անձանցից պահանջել փաստաթղթեր, տեղեկանքներ և հիմնավորումներ.

- Ոլորտի տվյալ բյուջետային տարվա ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորում պահանջող ծրագրերի կազմման նպատակով համապատասխան մարմիններից, ՀՀ մարզպետների աշխատակազմերից, համայնքապետարաններից և ճանապարհային ոլորտի կազմակերպությունից պահանջել փաստաթղթեր, տեղեկանքներ և հիմնավորումներ.
- Պահանջել ճանապարհային բնագավառի ծրագրերի իրականացման ընթացիկ և տարեկան արդյունքային ցուցանիշների վերաբերյալ տեղեկանքներ և հաշվետվություններ.
- Ճանապարհային ոլորտի զարգացման և քաղաքականության մշակման, իրականացվող ենթակառուցվածքային ծրագրերի իրազեկման և լուսաբանման նպատակով պահանջել փաստաթղթեր, տեղեկանքներ և հաշվետվություններ.
- Նախարարի հրամանների կազման կամ կատարվող փոփոխությունների համար պահանջել ներկայացնելու լրացուցիչ հիմնավորումներ, համապատասխան փաստաթղթեր և նյութեր.
- Նախարարի, ինչպես նաև Վարչության պետի մոտ անցկացվող խորհրդակցությունների, հանդիպումների կազմակերպման համար պահանջել տեղեկանքներ և նյութեր.
- Ճանապարհային ոլորտի ծրագրերի և մշտադիտարկման գործունեությանը վերաբերվող քաղաքացիների նամակներում բարձրացված հարցերի վերաերյալ պահանջել լրացուցիչ տեղեկատվություն և պարզաբանումներ:

<u>Պարտականությունները՝</u>

- Ամփոփել ՀՀ ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների (բացառությամբ Երևան քաղաքի տարածքում գտնվող այդ ճանապարհների մաս հանդիսացող ճանապարհահատվածների) շինարարության ու շահագործման ընդունման ենթակա օբյեկտների վերաբերյալ տրամադրված տեղեկատվությունը և ներկայացնել Վարչության պետին.
    - Ուսումնասիրել և ամփոփել Նախարարության տնօրինության տակ գտնվող ավտոմոբիլային ճանապարհների պաշտպանական գոտիներում և բնակավայրերի սահմանների միջով անցնող տարանցիկ հատվածներում շենքերի և շինությունների կառուցման, վերակառուցման համար տրամադրված փաստաթղթերի փաթեթների (ճարտարապետահատակագծային առաջադրանքների, նախագծերի, տեղանքի սխեմաներ և այլն) վերաբերյալ տրված մասնագիտական եզրակացությունը, տեխնիկական պայմանները և ներկայացնել Վարչության պետին.
    - Ուսումնասիրել Նախարարության տնօրինության տակ գտնվող ավտոմոբիլային ճանապարհների պաշտպանական գոտիներում և բնակավայրերի սահմանների միջով անցնող տարանցիկ հատվածներում ինժեներաերկրաբանական, ինժեներագեոդեզիական հետազոտություններ, արդյունահանման աշխատանքներ իրականացնելու, անտառահատում կատարելու, հողածածկույթը վնասելու,

պաշտպանական գոտիների հողերում հիդրոլոգիական ռեժիմի փոփոխություններ կամ ռելիեֆի տարրերի կայունություն (սողանքներ, լանջերի փլվածքներ, ձորակներ, լճակներ կամ հողերի ճահճացում) ապահովող աշխատանքներ իրականացնելու համար տրամադրված փաստաթղթերի փաթեթների վերաբերյալ տրված մասնագիտական եզրակացությունը, տեխնիկական պայմանները և ներկայացնել Վարչության պետին.

- Ուսումնասիրել Նախարարության տնօրինության տակ գտնվող ավտոմոբիլային ճանապարհների պաշտպանական գոտիներում և բնակավայրերի սահմանների միջով անցնող տարանցիկ հատվածներում ճանապարհին միացնող ուղիներ, իջատեղեր, մուտքեր և ելքեր կառուցելու, ճանապարհային երթևեկությանը չվերաբերող նշաններ, ցուցանակներ, լուսավորություն տեղադրելու, ծառատունկ իրականացնելու համար ներկայացված փաստաթղթերի փաթեթների վերաբերյալ տրված մասնագիտական եզրակացությունը, տեխնիկական պայմանները և ներկայացնել Վարչության պետին.
- Ուսումնասիրել Նախարարության տնօրինության տակ գտնվող ավտոմոբիլային ճանապարհի օտարման շերտում և պաշտպանական գոտում սպասարկման օբյեկտների համար ներկայացված փաստաթղթերի փաթեթների վերաբերյալ տրված մասնագիտական եզրակացությունը, տեխնիկական պայմանները և ներկայացնել Վարչության պետին.
- Ուսումնասիրել և ամփոփել ՀՀ ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների հիմնանորոգման վերաբերյալ ներկայացված հաշվետվությունները, առաջարկությունները և հիմնավորումները, կազմել դրանց վերականգնման ծրագիրը և ներկայացնել Վարչության պետին.
- Ուսումնսիրել և ամփոփել պետություն-մասնավոր գործընկերության շրջանակներում ճանապարհաշինության ոլորտում ներկայացված տեղեկատվությունը և դրանց իրականացման ծրագրերի վերաբերյալ ներկայացնել առաջարկություններ Վարչության պետին.
- Կազմել ոլորտի տվյալ բյուջետային տարվա ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորում պահանջող ծրագրերը և ներկայացնել առաջարկություններ Վարչության պետին.
- Կազմել և Վարչության պետին ներկայացնել ճանապարհային բնագավառին վերաբերվող վիճակագրական հաշվետվություններ (հարցաթերթեր, տեղեկանքներ և այլն).
- Կազմել և Վարչության պետին ներկայացնել ճանապարհային ոլորտի զարգացման և քաղաքականության մշակման, իրականացվող ենթակառուցվածքային ծրագրերի իրազեկման և լուսաբանման նյութեր և տեղականքներ.
- Նախապատրաստել առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր և այլ գրություններ:

3. Պաշտոնին ներկայացվող պահանջները

3.1 Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն,

3.2 Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ:

3.3 Աշխատանքային ստաժը, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն երեք տարվա ստաժ կամ չորս տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ տրանսպորտի կամ ճարտարագիտության կամ ֆինանսավարկային կամ տնտեսագիտության կամ իրավունքի բնագավառում՝ չորս տարվա աշխատանքային ստաժ.

3.4 Անհրաժեշտ կոմպետենցիաներ

<u>Ընդհանրական կոմպետենցիաները՝</u>

1. Աշխատակազմի կառավարում
2. Քաղաքականության վերլուծություն, մոնիթորինգ
3. Որոշումների կայացում
4. Ծրագրերի կառավարում
5. Խնդրի լուծում
6. Բարեվարքություն

<u>Ընտրանքային կոմպետենցիաները՝</u>

1. Փոփոխությունների կառավարում
2. Կոնֆլիկտների կառավարում
3. Տեղեկատվական տեխնոլոգիաներ և հեռահաղորդակցություն
4. Ժամանակի կառավարում
5. Ելույթների նախապատրաստում և կազմակերպում
6. Փաստաթղթերի նախապատրատում

4.Կազմակերպական շրջանակը

4.1 Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման կազմում գործող կառուցվածքային միավորի աշխատանքների կազմակերման և ղեկավարման համար:

4.2 Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման կազմում գործող կառուցվածքային միավորի աշխատանքների կազմակերպման և ղեկավարման շրջանակներում:

4.3 Գործունեության ազդեցությունը

Ունի գերատեսչական մակարդակում աշխատանքների կազմակերպման և քաղաքականության իրականացման ապահովման և իր լիազորությունների իրականացման արդյունքում այլ անձանց վրա ազդեցություն:

4.4 Շփումները և ներկայացուցչությունը

Շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի, այլ պետական մարմինների և կազմակերպությունների ներկայացուցիչների, ինչպես նաև օտարերկրյա պետությունների և

միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ՝ իր իրավասությունների շրջանակներում:

4.5 Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում, վերլուծում և գնահատում է իր կողմից ղեկավարվող կառուցվածքային միավորի գործառույթներից բխող խնդիրները և դրանց տալիս լուծումներ կամ մասնակցում է այդ խնդիրների լուծմանը: